

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 8)

23 հունիսի 2017թ.

Ժամը՝ 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի ազգային ֆիլանթրոփի նվազախումբ» ՊՈԱԿ-ի համար ավտոմատ ռեգերվային միացման սարքավորումների ձեռքբերում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)
2. «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին:
(Գեյմ Ռուշանյան)
3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբեյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին:
(Գևորգ Պապիկյան)
4. «Ֆոքլոս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ինը հատ մանկական խաղահրապարակ համայնքներում» ծրագրի մասին:
(Անահիտ Քալանթարյան)
5. Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքների մաքուր խմելու ջրի մատակարարում» WE201700188 ծրագրի մասին:
(Գագիկ Գալստյան)

6. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

- 6.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 6.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 6.3 «Քենդլ» սինքրորոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 6.4 «Օգնենք հայ մանուկներին» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 6.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

- 6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-261-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):
- 6.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ 018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 6.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորդ Վիթն ինթերնեյշլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):
- 6.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ):
- 6.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բիշկեներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

7. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

- 7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսսոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ):
- 7.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 7.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի N Մ-477-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 7.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

- 7.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 7.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Այբ» կրթական հիմնադրամ):
- 7.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի N Մ-334-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):
- 7.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մայրի» հասարակական կազմակերպություն):
- 7.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Մայրի» հասարակական կազմակերպություն):
- 7.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N Մ-1353-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):
- 7.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):
- 7.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-1009-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն կազմակերպություն):
- 7.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Շովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն):
- 7.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1184-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)):
- 7.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 31-ի N Մ-833-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

8. Այլ հարցեր

- 8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-832-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին («Հայաստան» համակական հիմնադրամ):
- 8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N Մ-1136-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ԼԱՍԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունիսի 2017 թվականի ՆՄ - - Ա
քաղ. երևան

8/3

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱՎԱՆԱՅՎՈՂ
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼԱՐՄՈՆԻԿ ԵՎԱԳԱՆՈՒՄԲ» ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱՐ
 ԱՎՏՈՄԱՏ ՌԵԶԵՐՎԱՅԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
 ԶԵՆՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 01.1/14-1/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի -ի N 02/14/-17, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2017 թվականի հունիսի -ի N -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 9,800,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի ազգային ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար ավտոմատ ռեզերվային միացման սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՎԵ-Էլմոնտաժ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02236114) 2017 թվականի հունիսի 8-ին կնքված N ԱՎՖ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմատ ռեզերվային միացման սարքավորումների ձեռքբերում և մոնտաժում՝ 9,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Հ Ա Ս Տ Ա Ս Վ Ա Ս Ե



« Հայաստանի Ազգային ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար ավտոմատ ռեզերվային միացման սարքավորումների ձեռքբերում »

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Անխափան ելեկտրոնացման համար ապահովել «Հայաստանի Ազգային ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ը ամիրաժեշտ սարքավորումներով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով հարկվել հարկային արտոնություններին
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձինք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք, մշակութային բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է՝ 9.800.000,00 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի Ազգային ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հունիսի 08-ից մինչև 2017թ. օգոստոսի 08-ը

8/1

8/1

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2017 թվականի հունիսի 08-ից մինչև օգոստոսի 08-ը ընկած ժամանակահատվածում սարքավորումների գնում, տեղափոխում և անհատույց տեղադրում՝ 9.800.000,00 ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ներկայացված պայմանագրին կից հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն «ԱՎԵ-Էլմոնտաժ» ՍՊԸ-ից սարքավորումների ձեռքբերում՝ 9.200.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, նախագծային աշխատանքների իրականացում՝ 150.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, հին սարքավորումների ապամոնտաժում՝ 100.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, նոր սարքավորումների տեղադրում՝ 350.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Մշակույթի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բաղադրարկով ծրագրերի համակարգման համեմատորով (ենթամյակային և ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակամ՝ Արմինա Դարբինյանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8/1
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Զ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մեխիք-Աղամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

Ձ. 1/14-2/10716-17
15.06.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՄԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
12.06.2017թ. N 15/15.1/13565-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար ավտոմատ ռեգերվային միացման սարքավորումների ձեռքբերում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ «ԱՎԵ-Էլմոնտաժ» ՍՊԸ-ի հետ 08.06.2017թ. կնքված N ԱՎՖ-01/17 առուվաճառքի պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների փաստացի 6,800,000 ՀՀ դրամ գինը (որն ամրագրված է նաև ծրագրի 10-րդ կետում) չի համապատասխանում դրանց հանրագումարում նշված գործարքի ընդհանուր 9,800,000 ՀՀ դրամ արժեքին: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ ենք համարում որոշման նախագծում, կից ներկայացված ծրագրում և վերը նշված առուվաճառքի պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. Ե. Եսեյան

034/23005-1:

ԱՏՈՍ ԶԱՆՁՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Ալվազյան
Հեռ. 011 910-437



8/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N 01/3.1/3489-17 14.06 2017 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման-հանձնաժողովի նախագահ պրն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2017 թ. հունիսի 12-ի N 15/15.1/13565-17 գրության՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի ազգային ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար ավտոմատ ռեզերվային միացման սարքավորումների ձեռք բերման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք և առաջարկում ենք այն որակել որպես բարեգործական:

Հարգանքով՝

Ա. ԱՄԻՐՅԱՆ

021/2295B-17

Մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչություն
Կար.՝ Բ. Դեյան
Հեռ.՝ (011) 52-39-42



8/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyann@justice.am

14.06.17 N 02/14/10138-17

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 12-ի 15/15.1/13565-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի ազգային ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար ավտոմատ ռեզերվային միացման սարքավորումների ձեռքբերում» ծրագրի 10-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ ծրագրի շրջանակներում ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների գինը չի համապատասխանում ծրագրի ընդհանուր բյուջեին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

035/22920-17

Կատարող՝ Անդրանիկ Ռաչիոյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԷՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

8/1

«14» 06 2017թ.
No 06/3-8/20400-17
Ձեր No _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 12.06.2017թ.
թիվ 15/15.1/13565-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի ազգային ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար ավտոմատ ռեզերվային միացման սարքավորումների ձեռքբերում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀԱՄԿԿ
Ն. Բեմսեյան
Հեռ. 060544705

044/22812-17



հայաստան համահայկական հիմնադրամ
գործադիր վարչություն
Hayastan All-Armenian Fund
Executive Board

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Կառավարական 3-րդ մասնաշենք
Government Building 3, Yerevan 0010
Republic of Armenia
tel: (37410) 52 15 05 fax: (37410) 52 37 95
E-mail: info@himmadr.am

2/2

15 հունիսի 2017թ.

ՀՀՀ. 5/27-273

ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հ Ա Յ Տ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Արդարադատության
Նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանի գրության
«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմից «Հայաստանի Ազգային
Ֆիլարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի համար Ավտոմատ ռեզերվային
միացման սարքավորումների գնման, տեղափոխման և անհատույց
տեղադրման իրականացման ծրագրի վերաբերյալ ուղարկված ենք վերոնշյալ
ծրագրի լրանշակված տարբերակը և պայմանագրի համապատասխան էջը
անհրաժեշտ ուղղումներով:

Առդիր՝ 03 թերթ:

Հարգանքով՝

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն

Արմինա Դարբինյան



044/22812-17
094 - 23044
15 06 17

663

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հունիսի 2017 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

8/2

«Ա.Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐՖԻ)» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԾԱՌԱԳԱՅՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՄՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի -ի N, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի -ի N, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի հունիսի -ի N, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հունիսի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի -ի N 06/3-4/1-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակելի «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 192,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագիրը (կցվում է):

2. «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

« Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ) հիմնադրամի» տնօրեն Աշոտ Չիլինգարյանի կողմից

31. 05. 2017թ.

«Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը»

Ծ Ր Ա Գ Ի Ր


2/2

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել -Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի, գիտա-տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը, -միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին, -մտավոր ներուժի արտահոսքի կանխման գործընթացին, -ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին, -միջազգային չափորոշիչներին համապատասխանող գիտական հետազոտությունների իրականացմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի իրականացման համար նախատեսվում է օրենքով սահմանված կարգով ԱԱՀ-ից ազատել ՀՀ ներսում գնվող ապրանքները և ծառայությունները, և արտերկրից գնվող ապրանքների ներմուծման ժամանակ օգտվել մաքսային զանազան վճարումների արտոնություններից
3.	Բարեգործները	- «Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցություն » Armenian Engineers and Scientists of America, Inc. 117 S. Louise St. #306 Glendale, CA 91205 - «Տիեզերական ճառագայթների բաժանմունքի (S&F) բարեկամներ» CRD Friends : P.O. Box 655, Menlo Park, CA 94026 - Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն. 212-319-6383; 55East 59th Street New York, NY 10022-1112
4.	Ծրագրի կատարողը	Ծրագիրը իրականացնում է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ) » հիմնադրամը (ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փ. 2, ՀՎՀՀ՝ 01202364)

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փողոցում գտնվող թիվ 2 մասնաշենքում, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում գտնվող «Նոր-Ամբերդ» և «Արագած» բարձրադիր գիտական կայաններում: Գիտության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 192.000.000 (հարյուր իննսուներկու միլիոն) ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Տիեզերական ճառագայթների Բաժանմունքի երիտասարդ գիտականներն ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող անձնակազմը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2017թ. Սեպտեմբերի 1-ից, մինչև 2022թ. Սեպտեմբերի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Գումարների բաշխվածությունը հետևյալն է՝</p> <ul style="list-style-type: none"> - անհատական ֆինանսական օժանդակություն և աջակցություն (պարգևատրումների տեսքով) բաժանմունքի 20քսան) երիտասարդ գիտաշխատողներին՝ 50,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը), ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող և սպասարկող 15 (տասնհինգ) հոգուց բաղկացած անձնակազմին՝ 20,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը) . -Ամենամյա գիտաժողովների, կոնֆերանսների սեմինարների և բարձր էներգիայի աստղաֆիզիկայի ամառային դպրոցների անցկացում Միջազգային գիտական միջոցառումների շրջանակներում նախատեսվում են կազմակերպական, տարածքի վարձակալման, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 18.000,000 դրամ , որից՝ <ul style="list-style-type: none"> 01.09.17թ.-01.09.18թ. - 3,600,000 դրամ, 01.09.18թ.-01.09.19թ. - 3,600,000 դրամ, 01.09.19թ.-01.09.20թ. - 3,600,000 դրամ 01.09.20թ.-01.09.21թ. - 3,600,000 դրամ 01.09.21թ.-01.09.22թ. - 3,600,000 դրամ - գիտական գործուղումներ – 11,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը)

	<p>-իրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների նյութերի, գիտական հոդվածների, ժողովածուների և մենագրությունների հրատարակում և հրատարակված նյութերի առաքում՝ – 10,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը) դրամ,</p> <p>-Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ և պարագաներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլյոգրաֆներ, մետերոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա – 18.000.000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներսում –6.000.000(2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը):</p> <p>-Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների (սենյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդի, վառելիքաքսայուղային նյութերի) ձեռքբերում (18.000.000 դրամ, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվելու Հայաստանի Հանրապետության ներսում, 2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում):</p> <p>-Արտաճանապարհային մարդատար (2) և բեռնատար (1) ավտոմեքենաների ներմուծում(35.000.000 դրամ) 2018թ. ապրիլ- 2020թ. հոկտեմբեր</p> <p>-Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր(6.000.000 դրամ)</p>
--	--

10.	<p>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Գիտաժողովների շրջանակներում նախատեսվում են հատուկ սարքավորումների (լազերային պրոյեկտորներ և այլն) ձեռք բերում, կազմակերպական, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 18,000,000 դրամ. 2. Հրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների նյութերի, գիտական հոդվածների, ժողովածուների, մենագրությունների հրատարակում և հրատարակված նյութերի առաքում՝ - 10,000,000 դրամ. 3. Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ և պարագաներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլոգրաֆներ, մետերոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա (18մլն դր) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներքում (6 մլն դր). 4. Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների (սենյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդամթերքի, վառելիքա-քսայուղային նյութերի) ձեռքբերում 18մլ դրամ: 5. Արտաճանապարհային մարդատար երկու ավտոմեքենաների (24մլն դրամ) ներմուծում ամառային արշավախմբերի անձնակազմերի տեղափոխման, գիտական միջոցառումների սպասարկման և այլ կարիքների համար:
-----	---	---



		<p>6. Արտաճանապարհային մեկ բեռնատար ավտոմեքենայի (11 մլն դրամ) ներմուծում՝ փորձարարական սարքավորումների և կայանների կարիքներին անհրաժեշտ այլ բեռների տեղափոխման համար:</p>
11.	<p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ամսեկան</p>	<p>Ծրագրի հաշվապահի աշխատավարձ՝ ամսական 100.000 դրամ, ընդամենը 5 տարվա համար՝ 6.000.000 դր</p>
12.	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է շարունակել սերտ համագործակցություն՝ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ գիտության և կրթության նախարարության գիտության պետական կոմիտեի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և Հայհիդրոմետ ծառայության, «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոնի» (DESY-Համբուրգ), Կառլսրուհեի Տեխնոլոգիական ինստիտուտի (KIT), Մաքս Պլանկի անվ. Ֆիզիկայի ինստիտուտի (MPI - Սյունխեն), ամերիկյան Ստենֆորդի համալսարանի (STANFORD UNIVERSITY) հետ:</p>
13.	<p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի իրականացման արդյունավետությունը, հիմնականում, վերահսկվելու է դռնոր կազմակերպության կողմից՝ ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա: Մինևույն ժամանակ սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով :</p>





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

2/2

0010, Երևան, Մեխիբ-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

09.06/14-2/10362-17

09.06.17թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
06.06.2017թ. N 15/15.9/13115-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտորդություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ԶԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կառարող՝ Սարգիս Ավետիսյան
Հեռ. 011 910 437



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ

2/2

«12» 06 2017թ.

No 06/3 - 8/203 55-17

Ձեր No _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 06.06.2017թ.
թիվ 15/15.9/13115-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Համաձայն ծրագրի 9-րդ կետի՝ նախատեսվում է ներմուծել 2 արտաճանապարհային ավտոմեքենաներ, սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում առկա տեղեկատվության համաձայն՝ կազմակերպության կողմից 2008 թվականից մինչ օրս արդեն իսկ ներմուծվել են թվով 3 մարդատար ամենագնաց ավտոմեքենաներ, իսկ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 21.04.2017թ. N345-Ա որոշմամբ բարեգործական է որակվել ևս 1 մարդատար ավտոմեքենայի ներմուծումը (այն դեպքում երբ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի ավարտին մնացել էր 5 ամիս)՝ պայմանով, որ նշված ավտոմեքենան օգտագործվելու էր կազմակերպության կողմից իրականացվող հետազա ծրագրերում:

044/22520-17

0015, Երևան, Ս. Խորենացու 3/7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

12.06.17թ

034/22289-17

09.06.17թ

Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում ենք ծրագրի ընդհանուր արժեքը նվազեցնել նոր երկու արտաճանապարհային ավտոմեքենաների ձեռքբերման համար նախատեսվող արժեքի չափով:

2/2

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀԱԿԿ,
Արամայիս Բարսեղյան, Հեռ. 060544705



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur_hovhannisyan@justice.am
09.06.17 N 02/ԲԿ/9 850 -17
Ձեռ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 6-ի
15/15.9/13115-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Ա.Ի.Ալիխանյանի անվան
ազգային գիտական լաբորատորիա /ԵրՖի/ հիմնադրամի կողմից իրականացվող
«Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը»
ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի
16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/22349-17
09.06.17



2/2

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Տեղ./Տել.: 52 66 02, ֆաքս/ֆակс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N. 09/20/2570-12 «09» 06 2017թ.

«Կառավարության
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Հարգելի պարոն Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 2017 թվականի հունիսի 6-ի թիվ 15/15.9/13115-17 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ «Կրթության և գիտության նախարարությունը առաջարկություններ չունի»:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

« 13 » 06 2017 թ.

N. 9/02.1/6042-17թ.

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Ի պատասխան Ձեր 06.06.2017թ.
թիվ 15/15.9/13115-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Առաջարկում եմ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆ

Կարևոր՝ Բնակչության պաշտպանության քաղաքականության
ծրագրերի և փնդակարկական հոսքերի կառավարման վարչություն
Վ. Գրիգորյան հեռ. 010-31-77-21, 10-21

052/22759-17
13.06.17թ.

031/22409-12
09.06.17թ.

«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Ազակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» որոշման նախագիծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը
<p>ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Հիմնադրամի կողմից ներկայացված առաջարկում կցված է:</p>	<p>Որոշման նախագիծ հետ, հայտնում ենք Հանձնախմբի 9-րդ կետի՝ նախատեսվում է ներմուծել 2 արտաձևապարտիային ավտոմեքենաներ, սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում արված տեղեկատվության համաձայն՝ կազմակերպության կողմից 2008 թվականից մինչ օրս արդեն իսկ ներմուծվել են թվով 3 մարդատար անձնագնաց ավտոմեքենաներ, իսկ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 21.04.2017թ. N345-Ա որոշմամբ բարեգործական է որակվել և 1 մարդատար ավտոմեքենայի ներմուծումը (այն դեպքում երբ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի ավարտին մնացել էր 5 ամիս) պայմանով, որ նշված ավտոմեքենան օգտագործվելու էր կազմակերպության կողմից իրականացվող հետագա ծրագրերում:</p> <p>Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում ենք ծրագրի ընդհանուր արժեքը նվազեցնել նոր երկու արտաձևապարտիային ավտոմեքենաների ձեռքբերման համար նախատեսվող արժեքի չափով:</p>

2/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱԳՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՍ



REPUBLIC OF ARMENIA
A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ. (37410) 341 500, ֆաքս (37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel. (37410) 341 500, fax. (37410) 349 392
"12" 06 2017թ. № 01-14/157

Հ Հ Կ Ա Ռ Վ Կ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Բ Ա Ր Ե Գ Ո Ր Մ Ա Կ Ա Ն
Մ Ր Ա Գ Ր Ե Ր Ի Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Մ Ա Ն
Պարոն Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Պատճեն, գրությանը կցված նկարներով՝
Հ Հ Կ Ա Ռ Վ Կ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ո Ր Ն Թ Ե Ր Պ Ե Տ Ա Կ Ա Ն
Ե Կ Ա Մ ՈՒ Տ Ն Ե Ր Ի Կ Ո Մ Ի Տ Ե Յ Ի Ն Ա Ն Ա Գ Ա Ն Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Վ Ա
Պ Ա Ր Ո Ն Վ. Մ Ի Ր ՈՒ Ս Յ Ա Ն Ի Ն

Հարգելի պարոն Տեր-Միմոնյանյան

«Աջակցություն Ա.Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» բարեգործական ծրագրի մասին Պետական Եկամուտների կոմիտեյի կողմից "12" 06. 2017թ. № 06/3/-8/20355-17 գրությամբ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների կապակցությամբ հայտնում ենք՝

2008 թվականից առ այսօր ծրագրի միջոցներով ներմուծվել են 2 մարդատար արտաձևապարտիային՝ մեկ հատ „Տոյոդա“, ֆիրմայի „Սերկուրի լեռնագնաց“, տիպի և մեկ հատ „Տոյոտա լանդ կրուլդեր“, տիպի ավտոմեքենաներ, իսկ բոլորովին վերջերս ներմուծվել է „HYUNDAI GRAND STAREX“, 12 տեղանոց մարդատար ավտոմեքենա, որը դեռևս ճանապարհին է:

Բարեգործները ուսումնասիրելով մեր պայմաններն ու կարիքները՝ ընտրել էին „Սերկուրին,,: Միայն 2015 թվականին վերանորոգված լեռնային բարութանդ ճանապարհին այդ մեքենայի ընթացային մասերն արագ շարքից դուրս էին գալիս, բացի դրանից՝ այն մեր կարիքների համար, հատկապես ձմեռային ամիսներին՝ պիտանի չէ, փոխանցումների ավտոմատ տուփի և այլ տեխնիկական թերությունների պատճառով, հաճախ է փչանում ու վերանորոգումը դժվար է կատարվում ծախսատար լինելու, հանրապետությունում այդ տիպի մեքենաների բացակայության և պահեստամասերի դժվար ձեռքբերման պատճառով:

Ճանապարհային և երանակային ծանր պայմաններում աշխատելու համար իրեն լավ է դրսեվորել „Տոյոտա լանդ կրուլդեր“, տիպի ճապոնական 2003 թվականի արտադրության, 310000կմ վազք կատարած ավտոմեքենան, որը ձեռք է բերվել 2010 թվին, Երևանում գտնվող շվեյցարական կարմիր խաչի կողմից դուրս գրելուց հետո: Մեր մտա շահագործվել և վազքը հասցվել է 450000կմ: Մեքենան լինելով պատրաստված

667

099-23262
16 06 17

2/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ հունիսի 2017 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան


2/3

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ԱՐՄԱՎԻՐ ԲԱՂԱՔԻ ՀՈՐԵԼ-
ՅԱՆԱԿԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

հատուկ նպատակների համար՝ մեր պայմանների նկատմամբ ունի էական թերություններ: Ուղևորների մեքենա բարձրանալն ու իջնելն իրականացվում է մեկ դռնից ու մեծ անհարմարությամբ: Պատահարի դեպքում ուղևորների արագ էվակուացիան հնարավոր չէ իրականացնել: Մեքենան չունի հնարավորություն 4 անիվները միաժամանակ քաշող դարձնելու համար, որով մեքենայի անցանելիությունը լեռնային ճյուղնաձածք ճանապարհներին կտրուկ վատանում է, իսկ վայրէջքների ժամանակ դառնում վտանգավոր: Շահագործման համար այսօր արդեն մեծ ու չարդարացված ծախսեր է պահանջում, իսկ 1 կամ 2 տարի շահագործելուց հետո խստորեն կսպառի իր շահագործման ռեսուրսը: Ներկայացված ծրագրում նախատեսել ենք նույն ճանապարհով ձեռք բերել 4 դռնակի, 4x4 քարշակով նոր «Տոյոտա լանդ կրուիզեր», տիպի 2 մեքենա, որոնք երկար ժամանակով լիովին կբավարարեն մեր պահանջները:

Բարեգործական ծրագրում նախատեսված բոլոր ֆինանսական ծախսերը համաձայնեցված են բարեգործների հետ և կատարվում են նրանց և ՀՀ կառավարական հանձնաժողովի անմիջական հսկողության ներքո: Մեքենաների ձեռք բերման համար նախատեսված գումարները նշված են պայմանականորեն և նվազելու միտում ունեն, իսկ տնտեսված գումարները կողովեն այլ ոչ պակաս կարևորություն ունեցող նպատակների համար՝ ծրագրում համապատասխան փոփոխություններ անելուց հետո, որոնք նախապես համաձայնեցվում են բարերարների և կառավարական հանձնաժողովի հետ՝ վերջինիս կողմից փոփոխություններին հավանություն տալու և փոփոխված ծրագիրն հաստատելուց հետո միայն:

Ծրագրի միջոցներով ձեռք բերված բոլոր սարքավորումները, շարժական և անշարժ գույքը ստանադրվում են անվերադարձ, մնում են Ա.Բ. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ) հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքում և հանդիսանում են ՀՀ սեփականություն:



Տնօրեն

Ա. Չիլիկովայան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 01.1/80-2/-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի -ի N 06/3-8/-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 02/14/-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 02/14/-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (<< քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 321,378,262 դրամ ընդհանուր արժողությամբ «Արմավիր քաղաքի «Հրեյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Նիդերլանդների Թագավորության «Condor Carpets» ընկերության հետ (Randweg 14, 8061 RW Hasselt, The Netherlands) 2017 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրի N NBR.6588114CD-Rev 001 նախահաշվով սահմանված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտի արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 17,875 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Արմավիրի քաղաքապետին:



«Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից»
«07» հունիսի 2017 թ.

«Արմավիր քաղաքի «Հոբեյանավան» մարզադաշտի վերակառուցում»
Օ Ր Ա Չ Ա Ր

1. Ծրագրի նպատակը	Արմավիր մարզի տարածաշրջանում ֆուտբոլի զարգացման և մասսայականացման նպատակով Արմավիր քաղաքային համայնքի, Հանրապետության փողոց 130 հասցեում «Հոբեյանավան» մարզադաշտի վերակառուցում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Այնպիսով և ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարվերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3. Բարեգործը	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն – (UEFA-Հվեյցարիա, Սիոն) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա – (FIFA - Ըվեյցարիա, Յուրդիլ):
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, խանջյան 27, ՀՎՀՀ 02566915):
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվում է Արմավիր քաղաքային համայնքում, սպորտի բնագավառում:
6. Ծրագրի բյուջեն	321,378,262 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (ՀՀ, քաղ. Երևան, խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) և դրան Արմավիր քաղաքային համայնքի, Հանրապետության փողոց 130 հասցեում վերակառուցվող «Հոբեյանավան» մարզադաշտի:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է կատարել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Մարզադաշտի վերակառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 60,404,810 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: 2. Ոռոգման համակարգերի նախագծման, կառուցման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: 3. Նաղադաշտերի կառուցում՝ 80,124,452 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: 4. Արևմտական խտանամկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,900,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: 5. Երևարարական նյութերի, մարզագույքի, խաղադաշտերի խնամքի արթապորտումների:

<p>10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրող, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>խտի սերմի և պարտումյութերի, արհեստական խտածածկերի, բնորոշ գործիքների, արհեստական խտածածկի մարզագույնի, արհեստական խտածածկի մշակման տեխնիկայի, կվարցային ավազի ներմուծում: 155.949,000 դրամ առօրյալ, 600.000 դրամ արհեստական խտածածկի և իրականացնել 2017 թվականի հունվարի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:</p> <ul style="list-style-type: none"> - մարզագույնի վերականգնման շինարարական աշխատանքների իրականացում: 45.514,810 դրամ, - պոմպակայանի շինարարական աշխատանքների իրականացում: 14.890,000 դրամ, - ոռոգման համակարգերի նախագծման, կառուցման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում: 15.000,000 դրամ, - մեկ ստանդարտ չափի խարտաշտի շինարարական աշխատանքների իրականացում: 33.190,300 դրամ, - մեկ արհեստական խտածածկով խարտաշտի հինգ դրենժային համակարգի կառուցում: 46.934,152 դրամ, - արհեստական խտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում: 18.000 եվրոյին համարժեք 9.900.000 դրամ, - շինմուլթի 10.000,000 դրամ, մարզագույնի 5.000,000 դրամ, խարտաշտի խնամքի սարքավորումների: 25.000,000 դրամ, խտի սերմի և պարտումյութերի: 20.000,000 դրամ ներմուծում, - խարտաշտի արհեստական խտածածկի (տեղադրման նյութերով և պարագամերով)՝ 92.000 եվրոյին համարժեք: 50.600.000 դրամ արհեստական խտածածկի մշակման տեխնիկայի՝ 10.250 եվրոյին համարժեք: 5.637,500 դրամ, մարզագույնի՝ 5.430 եվրոյին համարժեք: 2.986,500 դրամ ներմուծում, փոխադրման ծախսերը կկազմեն 12.000 եվրոյին համարժեք: 6.600,000 դրամ, - արհեստական խտածածկի բեռից, գործիքների՝ 17.500 եվրոյին համարժեք: 9.625.000 դրամ ներմուծում, փոխադրման ծախսերը կկազմեն 30.000 եվրոյին համարժեք: 16.500.000 դրամ, - կվարցային ավազի՝ 8.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք: 4.000.000 դրամ ներմուծում, ներառյալ փոխադրման ծախսերը:
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման մարմինների հետ, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն կրմավորի քաղաքապետարանի հետ:</p>
<p>13. Ծրագրի արդյունավետության վերաբերյալ մեկնումները, մեկնումները, մեկնումները, մեկնումները, մեկնումները</p>	<p>Ծրագրի արդյունավետության մեկնումները վերահսկողությունը կիրականացվի ՖԻՆԱԿ-ի (ֆինանսական տնօրին) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ:</p>

Գրառված է Ֆինանսային նախարարության կողմից: Գրառված է Ֆինանսային նախարարության կողմից: Գրառված է Ֆինանսային նախարարության կողմից: Գրառված է Ֆինանսային նախարարության կողմից:

2/3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

№ 06.1/14.Ձ/10624-17
14.06.2017 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՇՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
09.06.2017թ. N 15/15.6/13441-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
««Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից
իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում»
ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՍ ԶԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Սարգիս Ավակյան
Հեռ. 011 910-437

034/202874-17
14.06.2017 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

2/3

«ԻՃ» հունվարի 2017 թ.

№ 06/3-8/20264-17

Ձեր № _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.06.2017թ.
թիվ 15/15.6/13441-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»
իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի
«Հոբեյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Կարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀ
Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

044/22455-17
12.06.2017թ.



2/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyanyan@justice.am

13.06.2017թ. N 02/14/10075-17

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 9-ի 15/15.6/13441-
17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»
իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի
«Հոբեյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագիրը համապատասխանում է
ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի
մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաչիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/22738-17
13.06.2017թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

2/3

« 12 » հունիսի 2017 թ. № 1/06/730-17

ՀՀ, Երևան-0001, Արոլյան 9
հեռ./ֆ.: (+374 11) 526-529
էլ. փոստ՝ msy@msy.am
էլ. կայք՝ www.msy.am

26ր 2017 թ. հունիսի 9-ի N 15/15.6/13441-17 գրության

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից
իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում»
ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և
դիտողություններ չունի:

Հարգանքով՝

Ս. Ռոսպոմյան



ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունիսի 2017 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

2/4

«ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՌԻ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱԳՎՈՂ «ԻՆԸ ՀԱՏ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱԿԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րության 2017 թվականի հունիսի -ի N 01.1/14-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 02/14/ -17, Հայաստանի
Հանրապետության աշխարհաբանի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի
հունիսի -ի N ԱԱՄ/ԱնԻ-1-2/ -17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր
պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի -ի N 06/3-8/ -17 եզրակա-
ցությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Համբարձումյան 2/37, ՀՎՀՀ՝ 00130776) իրականացվող՝ 15,566,000 դրամ արժողությամբ «Ինը հատ մանկական խաղափրակաբանական համայնքներում» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակու-թյուն՝
